

Մի դատապարտյալը քննություն հանձնեց, մյուսը գիտական թեզ է գրում

Կարդացվել է 717 անգամ¹ Մեկնաբանություն Տարածել Տպել

16:56 | Նոյեմբեր 6 2013

Նուբարաշեն ՔԿՅ-ում այսօր հաջողությամբ հերթական քննությունները («Յոգեբուժություն», «Յոգեբանության հիմունքներ» եւ «Անձի հոգեբանություն») հանձնեց ցմահ դատապարտյալ Գեորգի Խանամիրյանը, որը սովորում է Գործնական հոգեբանության եւ սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի երրորդ կուրսում: Aravot.am-ը «Ուրարտուի» ռեկտոր, Յոգեբանների միջազգային խորհրդի անդամ, «Հայաստանի գործնական հոգեբանների միավորում» հ/կ-ի նախագահ Սեդրակ Սեդրակյանից տեղեկացավ, որ նույն ՔԿՅ-ի մեկ այլ ցմահ դատապարտյալ՝ Արսեն Արծրունու հետ էլ է հանդիպում կայացել: Պարոն Սեդրակյանը տեղեկացրեց, որ Արսեն Արծրունին պատրաստվում է գիտական թեզ գրել, ինչի կապակցությամբ էլ նրան խորհրդատվություն էր անհրաժեշտ: «Ուրարտու» համալսարանի ռեկտորի ձեռակերպմամբ, Արսեն Արծրունին փայլուն քննություն էր հանձնել եւ ընդունվել մագիստրատուրա՝ հոգեբանություն մասնագիտությամբ. «Հիմա էլ Արսենը մագիստրատուրան ավարտել է, դիմում էր գրել հայցորդ ձեռակերպելու մասին: Մենք հայցորդ ձեռակերպեցինք: Ի դեպ, դա եղել է նաեւ իմ հորդորով: Իր ավարտական աշխատանքը՝ մագիստրոսական թեզը շատ ծավալուն էր, բովանդակալից եւ յուրահատուկ, այդպիսի ինքնավերլուծություն աշխարհի որեւէ անկյունում չի եղել»: Մեր գրուցակցի ասելով, ժամանակին Արսեն Արծրունու ընդունելության քննությանը մասնակցել են մասնագետներ ոչ միայն «Ուրարտու» համալսարանից, այլեւ ԵՊՅ-ից: «Քննությունից հետո ԵՊՅ դասախոսներից մեկն ասաց, որ ցանկացած համալսարան կերազեր այսպիսի մագիստրանտ ունենալու մասին, ախր Արսենը հարցերի պատասխանները 9 տարի պարապել է: Պատասխանելիս նա հղումներ էր անում տարբեր հեղինակների գրքերին: Ինքը լեզուների տիրապետող մարդ է, նույնիսկ Դեվիդ Մեյերսի գիրքը նշեց, Հայաստանում շատերը այդ գրքին ծանոթ չեն: Արսեն Արծրունին ավարտական քննությունն էլ է գերազանց հանձնել եւ «Ուրարտու» համալսարանը կարմիր դիպլոմով է ավարտել: Նա հրաշալի մարդ է, խելացի, կիրթ, համեստ անձնավորություն», - կարծիք հայտնեց ռեկտորը: Հիշեցնենք, որ Արսեն Արծրունին դատապարտվել է «Դրո» ահաբեկչական խմբի գործով: Սեդրակ Սեդրակյանը

գտնում է, որ սովորելը յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքն է, անկախ նրանից՝ մարդը գտնվում է կալանավայրում, հիվանդանոցում, թե մեկ այլ վայրում: Արսեն Արծրունու դիպլոմային աշխատանքի թեման էր՝ «Ցմահ դատապարտյալի հոգեվիճակը»: Սեդրակ Սեդրակյանին գրած նամակում նա հիմնավորել էր իր՝ կրթությունը շարունակելու ցանկությունը. «Չարգարժան պրոֆեսոր Սեդրակյան ... Ինձ անհրաժեշտ է ուղղություն ցույց տվող, որ սովորեմ գիտական մոտեցում ցուցաբերել, ինչը ինձ հնարավորություն կտա երկարաժամկետ բանտային կալանքը, նրա արդյունքներն ու հետեւանքները ավելի խորապես պեղելու ներսից, ունակ կլինեմ մասնագիտական լեզվով եւ փաստարկված ձեւով ներկայացնել բանտային կալանքում գտնվող անհատի ներքին իսկական տանջանքը: Չավատում եմ, որ մագիստրատուրայում սովորելը եւ հետագայում դրա հիման վրա գրած աշխատությունս շատ-շատերին զերծ կպահի գիտակցված կամ ակամա հանցագործությունից: Չասարակության կողմից դատապարտյալին տրվող ուսումը եւ այս վերջինի ուսանելու միտումը նրանց միջեւ հաշտության նշան է»: «Ուրարտուկ» դասախոսները Aravot.am-ի հետ զրույցում նաեւ ասացին, որ Գեորգի Խանամիրյանի՝ բուհում կրթությունը շարունակելու որոշման վրա մեծ է եղել Արսեն Արծրունու դերը:

Գոհար ՉԱԿՈՒՅԱՆ

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս
հասցեով՝ <http://www.aravot.am/2013/11/06/402915/>

© 1998 - 2014 Առավոտ – Լուրեր Չայաստանից